



Փաստ. անվանումը	ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԳ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-31-01
Հաստատման ամսաթիվը	01/03/2012
Արձանագրության N	03/11-12
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ , Սուրեն Օհանյան
Մշակող	Որակի ապահովման կենտրոն
Ներդրման/իրականացման պատասխանատու	Կադրերի բաժին



Փաստաթղթի փոփոխությունները

Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն, Ստորագրություն
23.12.2015	Վերանայված է և կատարված է լրացումներ(8-րդ կետը)՝ «Ղասախոսների վերապատրաստման կրեդիտային եղանակը»	Գիտական խորհուրդ Սուրեն Օհանյան 

Բովանդակություն

1. ՓԱՍՏԱԹՂԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	2
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	4
3. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ	4
4. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ	5
5. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ	5
6. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՎԱՐՉԱՐԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ	5
7. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ	5
8. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ԵՂԱՆԱԿԸ	5
9. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ	7

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1 Դասախոսների վերապատրաստումը ԵՄՅ կրթական քաղաքականության Էական տարր է: Այն միտված է դասախոսների գիտելիքների, հմտությունների, կարողությունների և մոտեցումների զարգացմանը՝ նպաստելով ուսանողների ուսուցման և ուսումնառության արդյունավետության շարունակական բարելավմանը:

2.2 ԵՄՅ-ում իրականացվում են

- մասնագիտական,
- մեթոդական,
- հետազոտական,
- վարչարարական վերապատրաստումներ:

2.3 Դասախոսների վերապատրաստումն իրականացվում է

- խորհրդատվության,
- մենթորության,
- փորձի փոխանակման,
- Էլեկտրոնային դասընթացների,
- գործընկերների հետ անհատական հանդիպումների,
- կլոր-սեղան քննարկումների,
- աշխատաժողովների,
- համաժողովների,
- սեմինարների, թրեյնինգների միջոցով:

2.4 Դասախոսների վերապատրաստման հիմքում ընկած է ԵՄՅ որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացվող պրոֆեսորադասախոսական կազմի կարիքների գնահատումը: Օրինակ, դասախոսների վերապատրաստումն իրականացվում է դասախոսների գնահատման արդյունքների պարտադիր քննարկման (տեղի է ունենում ԵՄՅ որակի ապահովման կենտրոնի կողմից դասախոսների գնահատման արդյունքների վերլուծությունից և հրապարակումից հետո) հիման վրա:

2.5 ԵՄՅ-ում գործում են դասախոսների վերապատրաստման պարտադիր և ոչ պարտադիր գործընթացներ:

2.6 Դասախոսների ոչ պարտադիր վերապատրաստումը տեղի է ունենում ընթացիկ կարիքների առաջացման պարագայում, ինչպես նաև դասախոսների վերապատրաստման համար բարենպաստ նախաձեռնությունների իրականացմամբ և դրանց իրականացման խրախուսմամբ:

2.7 ԵՄՅ յուրաքանչյուր դասախոս տարին մեկ անգամ պարտադիր կերպով անցնում է վերապատրաստման դասընթաց/ներ:

2.8 Դասախոսների վերապատրաստումն առանձնահատուկ նշանակություն է ստանում այն իրավիճակներում, երբ ԵՄՅ ներդրվում են նոր տեխնոլոգիաներ, քաղաքականություններ, գործընթացներ և այլն:

2.9 ԵՄՅ դասախոսների պարտավորությունն է աջակցել մասնագիտական զարգացմանը նպաստող ԵՄՅ նախաձեռնությունների իրականացմանը:

3. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Դասախոսների մասնագիտական վերապատրաստման համար հիմնական պատասխանատվություն են կրում ԵՄՅ ամբիոնի վարիչները՝ խրախուսելով դասախոսների մասնագիտական աճը և ակտիվությունը մասնագիտական զարգացման նախաձեռնություններում:

4. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Դասախոսների մեթոդական վերապատրաստումը, հիմնականում, իրականացվում է խորհրդատվության (տրամադրվում է մեթոդական խորհրդատուների կողմից) և դասընթացների միջոցով, որոնք առնչվում են դասավանդման կատարելագործմանն ուղղված թեմաների (տե՛ս աղյուսակ 1):

5. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

- 5.1 Դասախոսների հետազոտական վերապատրաստումը նպատակաուղղված է դասախոսների հետազոտական հմտությունների կատարելագործմանը, ինչն իրականացվում է, հիմնականում, խորհրդատվության (տրամադրվում է ԵՄՀ հետազոտության և զարգացման գործընթացների պատասխանատուների կողմից) և դասընթացների միջոցով (տե՛ս աղյուսակ 1):
- 5.2 ԵՄՀ դասախոսների հետազոտական վերապատրաստումը նպաստում է նրանց գիտահետազոտական գործունեությանը՝ հողվածների, մենագրությունների, գեկույցների, վերլուծությունների և այլ նյութերի ստեղծմանը:
- 5.3 Դասախոսի հետազոտական վերապատրաստումը նպաստում է ԵՄՀ ինստիտուցիոնալ զարգացմանը:

6. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՎԱՐՉԱՐԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

- 6.1 ԵՄՀ Էական նշանակություն է տալիս ներբուհական առաջընթացի խթանմանը և բուհական հանրության պատասխանատվությունների շրջանակի ընդլայնմանը: Սա տեղի է ունենում պրոֆեսորադասախոսական կազմի վարչարարական՝ կառավարման, առաջնորդության, հնարավորությունների զարգացմամբ:
- 6.2 ԵՄՀ խթանում է պրոֆեսորադասախոսական կազմին մշակելու և ղեկավարելու տարաբնույթ նախագծեր (նաև վերապատրաստման դասընթացների միջոցով (տե՛ս աղյուսակ 1), ինչպես նաև զբաղեցնելու վարչական պաշտոններ:
- 6.3 ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի վարչարարական վերապատրաստումն իրականացվում է դասախոսների վերապատրաստման աշխատանքային խմբի պատասխանատվությամբ և հաստատության վարչական աշխատակիցների օգնությամբ, փորձի փոխանակման և նրանց կողմից տրամադրվող խորհրդատվության միջոցով:

7. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

- 7.1 Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջին յուրաքանչյուր ԵՄՀ դասախոս լրացնում է վերապատրաստման անձնական թերթիկ (տե՛ս ձևաթուղթ 1), որը պահպանվում է համապատասխան ամբիոնում ամբիոնի վարիչի պատասխանատվությամբ և որը հաշվի է առնվում գալիք տարվա համար դասախոսների վերապատրաստման գործընթացը կազմակերպելու հարցում:
- 7.2 Հաշվի առնելով դասախոսների կողմից լրացված վերապատրաստման անձնական թերթիկները՝ ԵՄՀ մեթոդական խորհուրդը քննարկում է տվյալ տարվա համար դասախոսների վերապատրաստման հնարավորությունները և ձևավորում տվյալ տարվա դասախոսների վերապատրաստումը կազմակերպող աշխատանքային խումբ:
- 7.3 Մեթոդական խորհուրդը ներկայացնում է դասախոսների վերապատրաստման պլանը և դասախոսների վերապատրաստումը կազմակերպող աշխատանքային խմբի կազմը ԵՄՀ գիտական խորհրդին:
- 7.4 ԵՄՀ գիտական խորհրդի կողմից հաստատված պլանի և աշխատանքային խմբի կազմի միջոցով մեկնարկում է դասախոսների տվյալ տարվա վերապատրաստական գործընթացը նոր ուսումնական տարվա սկզբից:

- 7.5 Դասախոսների վերապատրաստման աշխատանքային խումբը վերանայում է վերապատրաստման պարտադիր թեմաների ցանկը տվյալ տարվա համար:
- 7.6 Որոշ դասընթացների մեկնարկումից առաջ աշխատանքային խմբի կողմից իրականացվում է նախնական թեստավորում:

8. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ԵՂԱՆԱԿԸ (լրաց.23.12.2015):

- 8.1 Համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման ծրագրի կրեդիտային համակարգով կազմակերպման նպատակն է՝ համալրել պրոֆեսորադասախոսական կազմը որակի հավաստման միջազգային չափանիշներին համապատասխան և ապահովել նրանց ընդհանուր, առարկայական և հետազոտական կարողությունների շարունակական զարգացումը:
- 8.2 Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման ծրագիրը պարտադիր է Համալսարանի վաթսուն տարին չլրացած և մանկավարժական առնվազն երկու տարվա անընդհատ ստաժ ունեցող հիմնական դասախոսների համար: Համալսարանի մյուս դասախոսները կարող են ծրագրին մասնակցել իրենց կամքով՝ ռեկտորի համաձայնությամբ:
- 8.3 Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման ծրագիրը ֆինանսավորվում է կենտրոնացված միջոցների հաշվին, իսկ այլ բուհերի դասախոսներինը՝ վճարովի հիմունքներով, որը սահմանվում է ռեկտորի հրամանով:

8.4. Դասախոսի վերապատրաստման անհատական ծրագրի ձևավորումը

8.4.1 Դասախոսը վերապատրաստման ծրագիրը անցնում է հնգամյա ժամկետում՝ տվյալ ուսումնական տարվա առաջին կիսամյակից սկսած՝ անհատական ծրագրով աստիճանաբար կուտակելով ծրագրով սահմանված կրեդիտներ:

8.4.2 Ավելի ուշ ծրագրին միանալու դեպքում այդ դասախոսի ժամկետի հաշվարկը սկսվում է տվյալ կիսամյակից:

8.4.3 Դասախոսի անհատական ծրագրի հնգամյա բեռնվածությունը կազմում է 20 կրեդիտ: Տես աղյուսակ 1-ը մանրամասն նկարագրության համար:

8.4.4 Դասախոսի անհատական ծրագրի հնգամյա բեռնվածությունը տես աղյուսակ 1-ում:

8.4.5 Դասախոսի վերապատրաստման հնգամյա ծրագրի յուրաքանչյուր տարում դասախոսը պարտավոր է հավաքել նվազագույնը 4 կրեդիտ:

8.5. Դասախոսի վերապատրաստման ծրագրի կառավարումը

8.5.1 Ծրագրի կազմակերպական հարցերով պատասխանատվությունը և համակարգումը վերապահվում է վերապատրաստումների համար ստեղծված աշխատանքային խմբի համակարգողին: Տեղեկատվությունը կուտակվում է Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնում:

8.5.2 Ծրագրի բովանդակային հարցերով ընդհանուր պատասխանատվություն են կրում Համալսարանի համապատասխան ստորաբաժանումները՝ ամբիոնները և կենտրոնները և նրանց ղեկավարները:

8.5.3 Ծրագրի կատարման շահագրգիռ անձը և գլխավոր պատասխանատուն դա դասախոսն է: Յուրաքանչյուր դասախոս ինքը պետք է ժամանակին իրազեկի Մարդկային ռեսուրսների

կառավարման բաժնին վերապատրաստման ծրագրով վաստակած իր կրեդիտների մասին՝ ներկայացնելով համապատասխան փաստաթուղթ:

8.5.4 Ամբիոնները նույնպես պետք է վերահսկեն իրենց պրոֆեսորադասախոսական կազմի կողմից ծրագրի կատարումը, որի մասին ամենամյա տեղեկատվություն պետք է ներկայացնեն գիտխորհրդ:

8.6. Վերապատրաստման ծրագրի կազմակերպումը

8.6.1 Դասախոսը պահանջվող կրեդիտները կարող է կուտակել ինչպես համալսարանի կողմից հայտարարված դասընթացների շրջանակներում, այնպես էլ այլ հաստատություններում վերապատրաստումների միջոցով:

8.6.2 Կրեդիտների ճանաչման համաև հիմք է հանդիսանում վերապատրաստումը կազմակերպած հաստատության կամ ԵՄՀ կողմից տրամադրված վկայականը կամ այլ փաստաթուղթ՝ վերջնարդյունքների և ժամաքանակի վերաբերյալ մանրամասն նկարագրությամբ:

8.6.2 Յուրաքանչյուր վերապատրաստումից հետո դասախոսը պատասխանատվություն է կրում ներկայացնել արդյունքները Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնին, որտեղ գրանցվում և պահպանվում են արդյունքները՝ ներկայացված փաստաթղթի իսկությունը ստուգելուց հետո:

8.6.3 Մասնագիտական վերապատրաստումների համար պատասխանատվություն է կրում դասախոսը և համապատասխան ամբիոնի վարիչը, Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնում մուտքագրվում են կրեդիտները՝ միայն ամբիոնի վարիչի կողմից հաստատման դեպքում:

9. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՅՈՎՈՒՄԸ

ԵՄՀ դասախոսների վերապատրաստման գործընթացը ԵՄՀ ամբիոնների, Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի, վերապատրաստումների համար սպատասխանատու աշխատանքային խմբի և Որակի ապահովման կենտրոնի համատեղ գործունեության արդյունք է, որում ԵՄՀ որակի ապահովման մասնագետներն իրականացնում են մասնակցային միջամտություններ՝ բարելավելով, վերահսկելով և գնահատելով գործընթացները (լրաց.23.12.2015):

Աղյուսակ 1. ԵՄՅ դասախոսների պարտադիր վերապատրաստման դասընթացների թեմաների ցանկ

Դասընթացի ուղղվածությունը	Առաջարկվող թեմաներ	Կրեդիտների քանակ 1 կրեդիտը = 30 =ժամ (ներառում է լսարանային և ինքնուրույն)
Մասնագիտական վերապատրաստում		5
Դասախոսների մեթոդական վերապատրաստում	<ol style="list-style-type: none"> 1. Դասավանդման նորագույն տեխնոլոգիաներ 2. Դասավանդման ինտերակտիվ մեթոդներ 3. Ուսուցման խառը մեթոդներ 4. Գնահատում, չափում և հետադարձ կապի ապահովում 5. Ուսանողի մոտիվացում 6. Դասավանդման ռազմավարություն 7. Դասավանդման փիլիսոփայություն 8. Համակարգչային գրագիտություն /Word,Excel,Internet/ և այլն) 9. Անգլերեն լեզվի իմացություն /վեց մակարդակներից մեկը/ 10. Նախագծերի վրա հիմնված դասավանդման մշակում և կառավարում 11. Դասընթացի մշակում և կառավարում 12. Էլեկտրոնային դասընթացի մշակում և կառավարում 	5
Դասախոսների հետազոտական վերապատրաստում	Օրինակ՝ հետազոտական ծրագրի մշակում և իրականացում, գրագողություն և հղման տեխնիկա	5
Դասախոսների վարչարարական վերապատրաստում	Օրինակ՝ Ֆոնդերի հայթայթում, նախագծերի պլանավորում, տեղայնացում և կառավարում	3
Ըստ նախասիրությունների		2
Ընդամենը		20 (20*30=600 ժամ)

Ձևաթուղթ 1: Դասախոսի վերապատրաստման անձնական թերթիկ

Դասախոսի վերապատրաստման դասընթացի անվանումը	Դասախոսի վերապատրաստմանն ուղղված նախաձեռնության տիպը՝ համաժողով, կլոր-սեղան քննարկում և այլն (ոչ դասընթաց)	Ժամանակահատված
Մասնագիտական վերապատրաստում		
Մեթոդական վերապատրաստում		
Հետազոտական վերապատրաստում		
Վարչարարական վերապատրաստում		
<p>Այլ նշումներ (այստեղ գրվում են դասախոսի կողմից վերապատրաստմանը վերաբերող առաջարկություններ՝ ինչպիսի՞ դեր է նա ցանկանում ստանձնել ԵՄՀ դասախոսների վերապատրաստման գործընթացում, ի՞նչ նորարարական նախաձեռնություններ կարող է ունենալ, ինչպիսի՞ նախասիրություններ, կամ մտահոգություններ ունի իր և իր գործընկերների վերապատրաստման հարցում)</p>		